

« դուանրը, սկսան Հայր Ռուսաստան մտնել, և հոն
 « շուտ մը տեղաւորուեցան Տոնի ու Վոլկայի անբնակ
 « եզերքները, Սեւ ծովուն ու Ազախին անբեր ծովա-
 « փունրը : Հիմա այն կողմերը շատ մը բաղարներ
 « կան՝ որոնցմէ ոմանք շատ էրեւելի, և հայ գաղթա-
 « կաններուն մեռածը հիմնուած են, ինչպէս Նոր
 « Նախիջեվան, Գրիգորուպոլիս ու Ռոսթով, որ հա-
 « բաւային Ռուսիոյ անապատներուն մէջ կարծես քե-
 « յանկարծակի բուսան, և այն երկիրներն որ ատենով
 « անբեր ամայի էին՝ հիմա առատ հունձերով և գե-
 « դեցիկ այգիներով ծածկուած են :

« Աւստրիոյ երկիրը, Մաճաստանի ու Թրանսիլ-
 « վանիոյ մէջ, Հայերը կարգէ դուրս հմտութիւն կը-
 « ցուցնեն անասուն դարմանելու կողմանէ : Ահա-
 « զին դաշտերու տէր ըլլալով, մեծամեծ կալուածներ
 « ունին և իրենց երկիրներուն յարգը միշտ կատե-
 « ջրնեն : Շատ վաստակ կընեն իրենց եզներուն ու
 « կովերուն ծախուելին, և մեջերնեն շատը այս շա-
 « հաբեր առուստուրով մեծամեծ հարստութեանց տէր
 « եղած են :

« Թօսքերնիս ամփոփելով ըսեն ուրեմն քե Հայերը
 « կրօնատէր, ճարտար ու երկրագործ են : Այս երէք
 « կատարելութիւններն ալ իրենց բնաւորութեանը մէջ
 « են, և ինչպէս ըստ առաջին տեսութեան՝ նոյնպէս
 « և ըստ այսմ՝ ամենայն պէտք եղած յարմարութիւն-
 « ներն ունին մեր դիտաւորութիւնը կատարելու : »

(Շարայարութիւնը յաջորդ բնօրն մէջ :)

« commencèrent à émigrer en Russie, où bientôt ils
 « s'établirent sur les rives désertes du Don et du Volga,
 « sur les bords stériles de la mer Noire et de la mer
 « d'Azow. On trouve aujourd'hui dans ces contrées un
 « certain nombre de villes, dont quelques-unes d'une
 « grande importance, qui doivent leur origine à ces mi-
 « grations, entre autres la nouvelle Nakitchevan, Grigo-
 « riopol et Rostoff, qui surgirent pour ainsi dire des step-
 « pes désolés de la Russie méridionale, et dont les terri-
 « toires jadis incultes se couvrent aujourd'hui de riches
 « moissons et de superbes vignobles.

« En Autriche, dans la Hongrie et la Transylvanie, les
 « Arméniens montrent une rare expérience dans l'élevé
 « des bestiaux. Possesseurs d'immenses prairies, ils sont
 « grands propriétaires et seigneurs féodaux faisant valoir
 « leurs terres. Ils tirent de grands avantages de la vente
 « de leurs troupeaux de gros bétail, et beaucoup d'entre
 « eux ont fait dans ce commerce lucratif des fortunes
 « considérables.

« En résumé, les Arméniens sont donc religieux, in-
 « dustrieux et cultivateurs. Ces trois qualités sont inhé-
 « rentes à leur nature, et, sous ce point de vue comme
 « sous le premier, ils présentent toutes les garanties dési-
 « rables. »

(La suite au prochain numéro.)

ՀԱՅԿԱՍՏՈՒՆԻՔ ԻՆՆԵՆՏՍԱՄՆԵՐՈՐԳԻ ԳԱՐՈՒՍ

(Շարայարութիւն.)

Կայսերք Յունաց չեւ ևս վերջացեալք ի ցան-
 կուրենեն տիրապետելոյ աշխարհին Հայոց, ա-
 ռանձինն իմն զակն եղեալ էին յամրակառոյց և
 յանառիկ բերդաքաղաքն Անի. և Կոստանդին
 Մոնոմախ տեսեալ զի ոչ գօրէ գվայրն առնուլ, եղ
 ի մտի զբնաւորեալն հնարագիտութիւն բիզան-
 դեան իշխանութեան արկանել ի կիր, և բարե-
 կամութեան կերպարանօք հրապուրեալ յինքն
 յանկուցանել զԳագիկ Բ, որ քաղաւորէր յայնժամ
 ի Հայս : Եւ իբրև եւ ջնատառացեալ բանիցն Յու-
 նաց քանգուգէր և զանդաղէր զնալ, առաքեաց
 առ եւ կայսրն մասն ինչ զվայտին կենաց յոր և
 երդուեալն էր : Այլ և աւագանին և կարողիկոսն
 Հայոց սաղբանօք Մոնոմախին յաղերս անկեալ
 յորդորեցին զքաղաւորն զի երբիցէ ի կոչն. և
 որպէս մի ոմն ի պատմարանից աւանդէ, բարա-
 լեալ զգրիչն ի բաժակն սրբութեան՝ արեամբն

LA SOCIÉTÉ ARMÉNIENNE AU XIX^e SIÈCLE.

(Suite.)

Cependant les empereurs n'avaient point renoncé
 à leurs prétentions sur l'Arménie. Ani, que sa forte
 position et ses solides remparts rendaient inexpu-
 gnable, était surtout l'objet de leur convoitise. Con-
 stantin Monomaque, désespérant de s'en emparer par
 la force ouverte, résolut de mettre en jeu les artifices
 habituels de la politique byzantine et d'attirer près
 de lui, par des démonstrations d'amitié, Kakig II,
 qui régnait alors sur l'Arménie. Comme celui-ci, se
 défiant des Grecs, hésitait à venir, l'empereur lui
 envoya un fragment de la vraie croix sur lequel il
 avait fait les serments les plus solennels. Les grands
 et le patriarche d'Arménie, soudoyés par Mono-
 maque, joignirent leurs instances aux siennes, et
 pour déterminer le roi à partir, trempant, raconte
 un historien, leur plume dans le calice de la com-
 munion, ils signèrent avec le sang sacré du Christ

Քրիստոսի ետուն վկայութիւն պաշտպան կալ պետութեանն եւ ջրողու զի անիրաւեացի ոք առ տերն խրեանց մինչ նա ի բացեայ իցէ : Զիջաւ Գագիկ յայնքան աղաչանս եւ անկալ յողի. եւ իբրեւ նմաս ի Կոստանդնուպօլիս, հրաւիրեցաւ՝ ստիպեցաւ ձեռնագրել եւ տալ զգիր հրաժեշտի յարոտոյ անտի Հայաստանեայց : Ընդդէմ եկաց նա զառաջինն մեծաւ պնդութեամբ, անյաղքելի կացեայ ի հրապուրանացն եւ ի բանտից. այլ հուսկ ուրեմն տեղի ետ, եւ ընկալաւ ի կալուած ժառանգութեան զՊիզու քաղաք փոքրիկ ի Կապադովկիս, որ ոչ այնչափ փոխարեն ինչ հատուցումն էր ընդ աշխարհին գոր եման ի ձեռաց, որքան վայր արտրանաց : Զամս երեսուն եւ հինգ եկեաց նա անդանօր, այլ հայրենեացն յիշատակի ոչ եւս հանդարտեալ՝ խոյս ետ եւ զերծաւ ի տեղւոյնն : Հասին ի վերայ նորա յամալոսոյ ուրեք իշխանք երեք յոյնք որ տեսարք էին ամբողջին Կիզիստոայ յարեմտից կուսէ Կեսարիոյ, անդր ի ներքս գնա ձգեցին եւ խեղդաման արարին : Իսկ որք ընդ նմայն ի փախուստ ձեպէին՝ իբրեւ լուան երէ անկալ նա ի ձեռս Յունաց, վաղ քաջ ընդ առաւօտն անապարեցին գնալ եւ զերծուցանել գնա. եւ այն ինչ հասեալք ի պարիսպս Կիզիստոայ՝ տեսին զղիակն ջարբարաստիկ արքային խրեանց զի ի բարձուէ անտի բերդին կախեալ տատանէր : Սովին նողկալի յախշտակութեամբ եւ անօրէն սպանութեամբ վախճան եղև Բագրատունեացն քաղաքութեան, եւ Հայաստան աշխարհ անգլուխ եւ անիշխան մնացեալ՝ մատնեցաւ անպատուսպար ի կոխումն եւ յաւարառութիւն Յունաց եւ Արարացոց, եւս եւ անագնագունիցն քան զնոսա բշնամեաց, Թուրքացն ասեմ, որ տիրապետեալք Պարսից աշխարհին՝ որ ըստ օրէ այսր յառաջ խաղային :

Հայաստան աշխարհ մինչդեռ ի խորս անդ բշուառութեան եւ տառապանաց անկեալ դեռ, ետես գլոյովս յիւրոցն որդեկաց, — որպէս վերնախնամն Տեաջութիւն այսպիսիս երբեք երբեք գիտե ներհականս զարմանալիս պատրաստել ի հիացումն հասարակաց, — գլոյովս յորդեկացն ետես մեծապէս պայծառացեալս ի պալատանն Բիւզանդիոնի, ի բարձրագոյնս ամբառեալ պատիւս զինուորութեան, ազգականութիւն ընդ կայսերական տոհմիցն խառնել, եւ ի գահն իսկ բազմել կայսերաց : Մօրիկ կայսր ի Կապադովկիս Հայոց առեալ էր զձեռուղ . Լեւոն է յԱրժրունեացն ազգէր, որոց երկիր ժառանգութեան էր գաւառն Վասպուրական ի հարաւոյ եւ յարեւելից ծովակին Վա-

l'engagement de défendre le royaume et de le conserver à leur maître légitime pendant son absence. Cédant à toutes ces assurances, ce prince se mit en route. A son arrivée à Constantinople, invité, pressé de souscrire à une renonciation à la couronne d'Arménie, il s'y refusa d'abord avec une fermeté que ne purent vaincre les obsessions ni la prison. Forcé enfin de céder, il reçut en propriété la petite ville de Bizou, en Cappadoce, qui fut pour lui moins une compensation de la perte de ses États qu'un lieu d'exil. Après y avoir vécu trente-cinq ans, le souvenir de la patrie se réveillant plus vivement que jamais dans son cœur, il parvint à s'échapper. Surpris seul en route dans un endroit écarté par trois chefs grecs, qui possédaient le château de Guizisdra, dans les environs et à l'ouest de Césarée, il fut entraîné dans les murs de cette forteresse et immédiatement étranglé. Ceux qui l'accompagnaient dans sa fuite, apprenant qu'il était tombé entre les mains des Grecs, accoururent le lendemain dès l'aurore pour le délivrer. Le premier objet qui frappa leurs regards, en arrivant sous les murs de Guizisdra, fut le corps de leur malheureux souverain qui se balançait suspendu aux créneaux. Cet acte odieux de spoliation et ce meurtre abominable mirent fin à la dynastie des Bagratides, et l'Arménie, restée sans chef et en proie à l'anarchie, se trouva exposée sans défense aux invasions et aux ravages des Grecs, des Arabes, et d'un ennemi bien autrement formidable, les hordes turques qui s'avançaient après avoir fait la conquête de la Perse.

Tandis que l'Arménie était plongée dans cet excès de misère et d'abaissement, elle vit, par un de ces contrastes étonnants dont la Providence se plaît quelquefois à donner le spectacle au monde, plusieurs de ses enfants parvenir à une fortune éclatante à la cour de Byzance, y occuper les plus hautes dignités militaires, s'allier au sang impérial et s'asseoir sur le trône des Césars. L'empereur Maurice avait vu le jour dans la Cappadoce arménienne; Léon V appartenait à la famille des Ardzrounis, dont les possessions s'étendaient sur toute la province du Vashbouragan, au sud et à l'est du lac de Van; Basile le Macédonien, qui descendait de la race royale des Arsacides, fut la souche d'une li-

նայ. Վասիլ Մակեդոնացի յԱրշակունեաց արքունի տոհմէ՝ նախահայր եկաց արքայից՝ Բագմաց որ մի զմիոյ կնի Բագաուրեցին ի Բիւզանդիոն ընդ ամս աւելի քան զերկերիս (867-1086) : Գարձեալ եւ կայսրն Չմշկիկ Յովնանեա, որ իբր ի նատուցումն փոխարինի յափշտակութեան իւրոյ յաղթանակա շքեղս կանգնեաց ի վերայ Արարացոցն եւ Ռուսաց եւ Բուլղարաց, ծնեալ էր ի Չորրորդ Հայս առ ամամբքն եփրատայ :

Ոչ ընդ երկար ինչ ժամանակա մնաց ի ձեռս Յունաց շորքեալն առ ի նոցանէ : Բաժին Հայաստանի : Քանզի ինքեանք ապիկարք էին ի պաշտպանութիւն նորին ընդդէմ արտաքնոցն յարձակմանց, եւ յար ի կասկածանս գոյով յերեսաց փոսարանջնոյ ժողովրդոցն աստեղաց իւրեանց, բարձեալ էին ի նոցանէ աքաորանօք եւ կամ մանուածք գրաշամարտիկս ամենայն յառազ որերոյ երկրին : Այլ եւ ոչ ամիրապետքն տկարացեալք եւ վատարեալք՝ կարող ինչ էին ամբարտակ ընդդէմ դնել խուժանի Թուրքացն որ հեղեղարար գայրացմամբ որ քան զօր յարձակէին : Անդէն իսկ յամին 1040 արշաւեցին մտին նօքա ի Հայս, եւ գառաջինն ի բաց վանեցան. այլ յամին 1060 ուղխօրէն յարձակեալ յաղարտ վարեցին զԱրարատեանն գաւառ : Արիստան էառ զԱնի եւ կողոպտեաց. եւ յայնմ նետ : անց քաղաքն այն գամ քան զգամ առ ամիրայս Քրդաց ոմանց, առ Բագաուրս Վրաց, եւ առ Սելճուգեան իշխանս Պարսից, որ ելեւելս զմիմեամբք ատենին կորզել զայն յիրերաց մինչեւ ցամն 1239, յորում յաւար մատենեցաւ վայրագասուն Մողոյաց : Բնութիւն ինքնին օժանդակել քուէր ձեռաց մարդկան ի սպառսպուռ քանդումն քաղաքին այնորիկ. քանզի խարխալեալ յանագին սասանութեանց՝ կործան անկաւ եւ եղեւ կոյտ աւերակաց : Անցին Թուրքք ըստ եփրատ, տիրեցին փոքուն Ասիոյ, եւ զՅոյնս հալածական վարեցին մինչեւ ի պարսիսպս Բիւզանդիոնի. Հայաստան աշխարհն ողջոյն անկաւ ընդ ձեռամբ նոցա, եւ իշխանքն սակաւաւորք զերծեալք ի սրոյ՝ ապաստան եղեն յամուրս լերանց անմատոյցս ի բշնամնաց : Իսկ սուլդանք Սելճուգեանց բողին լքին զտեսչութիւն աշխարհին ի ձեռս ամիրայից Թուրքաց կամ Քրդաց, եւ այնուհետեւ այլազգիք տիրեցին երկրին լի բովանդակ :

Ի մեռանել վերջնոյ արքային Բագրատունեաց, Ռուբեն ոմն զօրավար նորին եւ ազգակից՝ արամբք սակաւօք յարեցելովք ի նա անկաւ ի սանմանս կայսերութեանն Յունաց ի Կիլիկիա եւ ամրացաւ ի կիրճն Տօրոսի : Անդ կանգնեաց նա զբազաւո-

gnée de princes qui régnèrent à Byzance pendant près de deux siècles (867-1086). Enfin Jean Zimiscès, qui racheta son usurpation par ses brillantes victoires sur les Arabes, les Russes et les Bulgares, était né dans la province appelée Quatrième-Arménie, sur les bords de l'Euphrate.

La portion de l'Arménie que les Grecs avaient usurpée ne demeura pas longtemps en leur possession. Eux-mêmes étaient impuissants à la protéger contre les envahissements du dehors, et comme ils redoutaient toujours quelque velléité d'indépendance de la part des populations, dont ils étaient détestés, ils leur avaient enlevé, par l'exil ou par la mort, tous les chefs doués de talents militaires. Le khalifat, tombé dans un état de faiblesse et d'avilissement, ne pouvait opposer aucune barrière aux flots chaque jour grossissants des Turks. Déjà, en 1040, ils avaient pénétré sur le territoire arménien, d'où ils furent d'abord repoussés. En 1060, ils l'inondèrent comme un torrent dévastateur et se jetèrent sur la province d'Ararad. Le sultan Alp-Arslan prit la ville d'Ani et la saccagea de fond en comble. Dès ce moment, cette ville appartint tour à tour à une famille d'émirs kurdes, aux rois de Géorgie et aux sultans seldjoukides de la Perse, qui s'en disputèrent la possession jusqu'à l'année 1239, où elle devint la proie des féroces Mongols. La nature elle-même semblait seconder l'action destructive de la main de l'homme : Ani, ébranlée par de violents tremblements de terre, ne présenta plus bientôt qu'un immense amas de ruines. Les Turks, après avoir franchi l'Euphrate, firent la conquête de l'Asie-Mineure, et poursuivirent les Grecs jusque sous les murs de Constantinople. L'Arménie avait été entièrement soumise par eux, et le petit nombre de chefs que le glaive avait épargnés se retirèrent dans des forteresses situées au milieu de montagnes inaccessibles. Les sultans seldjoukides abandonnèrent le gouvernement du pays à des émirs turks ou kurdes, et les infidèles y dominèrent dès lors sans partage.

A la mort du dernier des Bagratides, l'un de ses généraux, Roupèn, qui était aussi son parent, se jeta, avec une poignée d'hommes dévoués et d'action, sur les terres de l'empire grec en Cilicie et se retrancha dans les gorges du Taurus. Il y fonda le

րուքին Փոքուն Հայոց եւ գեորքինեանն անուանեալ հարստութիւն, որ յար ի պատերազմի երգողքն ընդ Քուրքս Փոքուն Ասիոյ եւ ընդ կայսերս Բիւզանդիոնի : Առաջինքն ի պայազատս Ռուբենի զիշխանի եւեք ունեին զանուն. ապա պարոնք անուանեցան՝ ի խաջակրաց անտի այսպէս պատուեալք սակս սպասանարկութեանցն զորս արարին նոցա. եւ հուսկ յետոյ զբազաւորի եւս ընկայան յորջորջումն զոր կայսրն Փրեղերիկոս Պարպարոսաա ետ միում յիշխանաց անտի Լևոն կոչեցելոյ : Եւ քրիստոնէութեամբն իւրեանց իրրեւ ի բնուստ նիզակակիցքեղեն Լատինացւոց Հայքն կիլիկեցիք, եւ ի սեր բարեկամութեան խառնեցան ընդ նոսա, եւ բազաւորքն ուրբինեանք խնամութիւնս արարին ընդ իշխանս Անտիոքայ նորմանտացիս յազգէ, եւ ընդ Լուսինեան տոհմին Կիպրոսի : Երկիր կոմսութեանն Եղեսիոյ յորում բազմաբիւ էին Հայք՝ ի ձեռս Գաղղիական տոհմի եր, այն է տոհմն ճոսլինեանց (ժօսլէն տը Քուրքընէ) :

Մողոյքն յարձակեալք յերեքասան դարուն յանապատից անտի իւրեանց ի ճոխեւ յարգաւանդ կողմանս արեւմտեանն Ասիոյ, ընդ առաջինս յաշխարհաց սոնակոխ արարին եւ զՄեծն Հայս : Յարձակեցան եւ ի վերայ սելճուգեան իշխանին Եկոնիոնի, եւ Հերում Ա. բազաւոր Փոքուն Հայոց՝ առ ի գտառչս սոնոյ յայրազատուն հրոսակացն այնոցիկ՝ փութացաւ հպատակել մեծի Խանին, եւ օգնական լինել նմա ի պատերազմունան որ յԱսորիս, ի Միջագետս եւ ի Փոքրն Ասիա : Եւ այս նիզակակցութիւն յետ ժամանակաց մեծապէս վնասակար գտաւ իշխանացն ուրբինեանց. քանզի սուլթանքն Եգիպտոսի վանեալ զՄողոյս, եւ առեալ ի ձեռաց քրիստոնէից զամուր ամուր տեղիս ծովեզերեայցն Ասորոց, զարձուցին վաղընդ փոյր զգէնս իւրեանց ընդդէմ Հայոց. որոց անօգնական ի Մողոյլիցն մնացեալ, եւ անյոյս ի քրիստոնէիցն արեւմտեայց՝ որ զաղարեցին յարշաւելոյ ի Պաղեստին, արագ արագ նկուն եղեն : Շանար-օղլի սպարապետ Շապան սուլթանին ի հուր եւ ի սուր մաշեաց զԿիլիկիա, եւ Լևոն Զ պաշարեալ յամուրն Կապան՝ ի պակասել պարենից անձնատուր եղեւ՝ յետ իննամսեայ պաշարման, եւ գերի վարեցաւ հանդերձ ընտանեօքն յեգիպտոս, ուր եւ եկաց մնաց ի զերութեան զամս վեց : Ուր ուրեմն յամին 1381 զերծեալ անտի աղաջանօք Յովնանու Ա. արքային Կաստիլիոյ, անց ի Սպանիա՝ շնորհ ունել ազատարարին իւրում, եւ անտի ի Գաղղիա յարքունիս Կարոյոսի Զ, որ մեծաւ քաղցրութեամբ պատուասիրեալ ասօնջականեաց զնա : Եւ մե-

royaume de la Petite-Arménie et une dynastie appelée, de son nom, *roupénienne*, qui fut presque toujours en guerre avec les Turcs de l'Asie-Mineure et avec les empereurs de Byzance. Les premiers successeurs de Roupên ne portaient que le simple titre de prince ou chef (*ischkhan*); ils l'échangèrent plus tard contre celui de *baron*, qui leur fut conféré par les croisés en reconnaissance des services qu'ils leur rendirent, et enfin contre celui de *roi*, que l'empereur Frédéric Barberousse accorda à l'un de ces princes, Lévon ou Léon. Comme chrétiens, les Arméniens de Cilicie devinrent les alliés naturels des Latins, et combattirent dans leurs rangs. D'intimes et fréquentes relations s'établirent entre eux : les rois roupéniens contractèrent des alliances avec les princes d'Antioche, de souche normande, et avec les Lusignan de Chypre. Le comté d'Édesse, qui était peuplé d'Arméniens, relevait d'une famille française, les Josselin de Courtenay.

Lorsqu'au XIII^e siècle les Mongols se précipitèrent du fond de leurs steppes sur les riches et fertiles contrées de l'Asie occidentale, la Grande-Arménie fut une des premières contrées qu'ils envahirent et dévastèrent. Etant venus fondre sur le sultan seldjoukide d'Iconium, le roi de la Petite-Arménie, Héthoum I^{er}, voulant détourner de ses États ces hordes auxquelles rien ne résistait, s'empessa de se reconnaître vassal du *grand Caan* et de lui fournir des secours dans toutes les guerres que ses armées soutinrent contre les musulmans en Syrie, en Mésopotamie et dans l'Asie-Mineure. Cette alliance avec les Tatares devait être un jour fatale aux princes roupéniens. A peine les sultans d'Égypte eurent-ils fait reculer les Mongols et enlevé aux chrétiens les places qui leur restaient sur les côtes de la Syrie, qu'ils se tournèrent contre les Arméniens. Dépourvus du secours des Mongols, et sans espoir d'en obtenir des chrétiens d'Occident, qui avaient renoncé à toute expédition en Palestine, ils ne tardèrent pas à succomber. Le sultan Schaban fit partir son général Schabar-Ogli, qui vint porter le fer et la flamme dans toute la Cilicie. Le roi Léon VI, assiégé dans sa forteresse de Gaban, fut forcé par le manque de vivres de se rendre après un siège de neuf mois. Fait prisonnier [avec sa famille, il fut emmené au Caire, où il resta six ans en captivité. Enfin, en 1381, délivré par la médiation de Jean I^{er}, roi de Castille, il passa en Espagne pour aller remercier son libérateur, et de là en France, à la cour

ուս Լեւոն ի Փարիզ ի 29 նոյեմբերի յամին 1395 յառաջնումն կիւրակի Գայստեան, որպէս ժամանակագիրն Սեն-Տրնի վանաց աւանդէ, եւ քաղեցաւ յեկեղեցուջ Կելեստինեանց : Ընդ նմա շիշան եւ հարստութիւն Ռուբինեանց եւ ազգութիւնն Հայոց միանգամայն :

Ի միջոցս անդ ժ՛Գ դարուն, ի բաժանել ինքնակալութեանն Մողոյաց ի պետութիւնս պետութիւնս ազատս յիբերաց, Հայք եւս ընդ ձեռամբ անկան դարձեալ զանազան իշխանաց : Ի կողմանս հարաւոյ Քուրդքն տիրեցին՝ բեկս ունելով ինքնիշխանս. զգաւառս արեւելից Պարսք կալան, եւ զարեւմտեայսն Յամանեանք եւ Թիւրքմէնք. եւ այս բաժանումն եկաց մնաց մինչեւ ցաւուրս աշխարհակալին Թիմուրի (որ եւ Լանկրամուր), որ զրովանդակն Հայս եարկ ընդ բռամբ : Սա զամնայն տեղիս ընդ որս անցաներն արեամբ ներկեաց եւ աւերակօք ծածկեաց՝ անհնարին անգրբութեամբ վարեալ ընդ ամենեայն. եւ որպէս ժամանակակից նորին պատմագիրն Թովմա Մեծփեցի աւանդէ, իբրեւ էառ նա զքաղաքն Վան՝ բռուն արար բնակչացն զանավիժ նոսել զանձինս իւրեանց ի բարձուէ անտի միջնաբերդին. եւ այնչափ զիզացեալ բարձրացաւ կոյտ զիականցն, զի որք ի վերջէ անկանէին՝ ոչ եւս լինէր ինչ նոցա վնաս : եւ զՍերաստիա առեալ՝ կենդանուցն քաղեաց զգունդս գունդս զօրացն Հայոց, եւ զզօրավարս նոցին անհնարին խոշտանգանօք կտտամանս արար :

Ի լուր մահուան աշխարհակալին Թարարաց իշխանքն ամնայն կողոպտեալք ի նմանէ եւ անարգեալք՝ զեն ի վեր առեալ յարեան ընդդէմ Շահրուխայ որդւոյ Թիմուրի, առնուլ ի ձեռաց նորին կամ յիբերաց զստացուածս իւրաքանչիւր :

Յետ սակաւուց ի պատճառս պատերազմացն Յամանեանց ընդ Պարսս՝ դարձեալ ասպարեզ գտաւ Հայաստան երկպառակութեանց եւ աղետից : Ուզուն-Հասան իշխան Ազ-գոյունչու տոհմին Թիւրքմէնից բազաւորեալ ի վերայ Պարսից, եւ արշաւեալ ի սամանս երկրին Յամանեանց, պատճառս ետ Մեհեմէտայ Բ, որ զԿոստանդնուպօլիսն առ, յարձակելոյ յարեւմտեայ զաւառս Հայաստանի եւ տիրելոյ անդ քաղաքաց բազմաց : Այն մարտք պատերազմաց ոչ եւս դադարեցին ի մեջ Յամանեան արքայից եւ յաշորդացն Ուզուն-Հասանայ, ասպա եւ բազաւորաց Սեֆեան տոհմին, որ գոռային հակառակ իբրեաց՝ եւ սակա

de Charles VI, qui l'accueillit avec autant de courtoisie que de magnificence. Il mourut à Paris, le 29 novembre 1395, le premier dimanche de l'Avent, suivant le religieux de Saint-Denis, et fut enterré dans l'église des Célestins. Avec lui s'éteignirent et la dynastie des Roupéniens et la nationalité arménienne.

Vers le milieu du xiv^e siècle, lorsque l'empire des Mongols, perdant son unité, se démembra pour former plusieurs souverainetés indépendantes l'une de l'autre, l'Arménie retomba au pouvoir de différents maîtres. Les Kurdes, dans la partie sud, fondèrent une principauté qui était régie par des beys particuliers; les Persans s'emparèrent des provinces orientales, les Ottomans et les Turkomans de celles de l'ouest. Ce partage dura jusqu'à l'époque où le célèbre Timour (Tamerlan) la réunit tout entière sous son autorité. Partout il laissa des traces sanglantes de son passage et des ruines. Jamais plus horribles cruautés n'avaient été exercées. Un historien de cette époque, Thomas de Medzop, raconte qu'ayant emporté d'assaut la ville de Van, il condamna les habitants à se précipiter eux-mêmes du sommet de la citadelle, et que la masse des cadavres s'éleva si haut, que les derniers qui se précipitaient ne se faisaient plus de mal. A la prise de Sébaste, il fit enterrer vivantes les troupes arméniennes et périr leurs chefs dans des supplices affreux.

A peine la mort du conquérant tartare fut-elle connue en Arménie, que tous les chefs qu'il avait dépouillés de leurs possessions et renversés, entreprirent, les armes à la main, de les revendiquer sur Schah-Roukh, fils de Timour, ou de se les disputer entre eux.

La lutte des sultans ottomans et des rois de Perse ouvre bientôt après une nouvelle phase de déchirements et de calamités pour l'Arménie. Un chef des Turkomans du mouton blanc, Ouzoun-Hassan, qui s'était assis sur le trône de Perse, ayant violé le territoire ottoman, fournit à Mahomet II, le conquérant de Constantinople, un prétexte pour pénétrer dans la partie occidentale de l'Arménie et s'y rendre maître de plusieurs villes. Ces guerres se perpétuèrent entre les sultans de Constantinople et les successeurs d'Ouzoun-Hassan, et ensuite les monarques de la dynastie des Sofis, divisés à la fois par des intérêts politiques et par des dissidences

քաղաքական շահուց եւ ի պատճառս կրօնական տարաձայնութեանց : Եւ Հայաստան աշխարհ, ըստ ձախողակ բաղդի դրիցն իւրոց ի բնե՛ պարեզ եւ կոխան եղաւ սպաքարմանց՝ նոցա, որպէս երբեմն եւ կայսերացն Բիւզանդիոյ եւ արքայիցն Սասանեանց : Ըստ յաջողելոյ զինուց միոյ ուրուք յախոյննից անտի, եւ Հայք անցանէին ի Թուրքացն ձեռանէ ի Պարսս, եւ զտեսարն եւեր փոխէին՝ անզերծք յաւերածոյ եւ ի հարստանարութեանց : Յաճախեցին եւ ես զաղետն ապրտամբութիւնք պէյից ամբացելոց յիւրաքանջիւր կալուածս, որ բազում այն էր զի գլուխ ամբառնային ընդդէմ սուլդանաց որոց հարկատուք էին : Բայց քան զամենայն պատերազմունս Յամանեանցն ընդդէմ Պարսից աղետաբեր եղեւ Հայաստանեայց այն որ բացաւ յառաջին ամս ժէ դարուն ընդ Շահարաս Ա. եւ ընդ սուլդան Սնմետ Ա., ի պատճառս սահմանածայր զաւառացն Հայաստանի, որպէս եւ հանապազ յայն սակս զրգոէին ընդ միմեանս պետութիւնքն երկօրին : Կամեցեալ Շահարասայ խափան ինչ հզօր արկանել յառաջելոյ բշնամուլոյն, եղ ի մտի յաւեր եւ ի կործանումն զնել զՀայս, եւ յանապատ ամայի զերկիրն զարձուցանել. եւ արձակեաց ի զաւառս զաւառս զործակալս զօրօք հանդերձ՝ ի բաց հանել ուժգին զբնակիչս, եւ զքաղաքս եւ զգլուխս հրդեհեալ բոցակիւղել : Եւ ոչ միայն խափանել կամեր այնու շահն զամենայն կցորդութիւն Հայոց ընդ Թուրքս, այլ եւ զամայացեալն երկիր բազաւորութեան իւրոյ ճոխացուցանել աշխատասեր եւ ճարտարութեստ ժողովրդովք : Անյուր էին խժողժութիւնքն որովք կատարեցաւ պատուեր Շահարասայ, եւ երդք անելի քան զքսան եւ չորս հազար խելաք ի հայրենեացն՝ վարեցան ի Պարսս հանդերձ արամբք եւ կանամբք, ծերովք եւ տղայիւք : Ոմանք ի նոցանէ անկան յուղուջն պարտասեալք, եւ կամ ընդ հարուածովք յափշտակողացն խոշտանգեալք, եւ յուրովք զետամոյն եղեալ հեղձան ի ջուրս սաստկահոսանն երասխայ :

(Մնացումն յառաջիկայս :)

ԵՒ. ՏԻԵԼՈՐԻԷ :

religieuses. Par une conséquence fatale de sa position géographique, l'Arménie était le théâtre et la victime de ces conflits, qui rappelaient pour elle ceux des empereurs de Byzance et des Sassanides. Suivant que la fortune favorisait les armes de l'une ou de l'autre des deux puissances rivales, elle passait sous la domination turke ou persane, changeant de maître sans cesser jamais d'être dévastée et opprimée. Les insurrections des beys, qui dans leurs fiefs bravèrent plus d'une fois l'autorité des sultans leurs suzerains, aggravaient encore singulièrement cette situation; mais de toutes les guerres des Ottomans contre les Persans, aucune ne fut plus préjudiciable à l'Arménie que celle qui éclata, dans les premières années du XVII^e siècle, entre Schah-Abbas I^{er} et le sultan Ahmed I^{er}, et que provoqua la question des frontières arméniennes, éternel sujet de discorde entre les deux États. Schah-Abbas, pour arrêter la marche de l'ennemi par une mesure énergique, résolut de tout détruire en Arménie et de transformer ce pays en un vaste désert. Des agents escortés de troupes furent envoyés dans chaque province avec la mission d'en emmener de force les habitants et d'incendier les villes et les villages. L'intention du schah était à la fois d'empêcher toute communication des Arméniens avec les Turks et de transplanter dans son royaume appauvri des populations actives et industrielles. Ces ordres furent exécutés avec une barbarie inouïe : plus de vingt-quatre mille familles, arrachées de leurs foyers, furent entraînées à marches forcées, hommes, femmes, vieillards et enfants, dans la Perse. Une partie périt en route de fatigue ou sous le bâton et le sabre des ravisseurs; un grand nombre furent engloutis dans les flots impétueux de l'Araze.

ÉD. DULAURIER.

(La suite au prochain numéro.)

* Փարիզեան ամսագրոյն նիւրերն այս անգամ հարկադրեցանք յաջորդ ամսատետրին բողոս :

Propriétaire-gérant : A. LACHAT.

Ի ՓԱՐԻՉ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ՎԱԼՏԷՐԻ :

PARIS. — IMPRIMERIE WALDER, RUE BONAPARTE, 44.